ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

1. Ո՞ր օկտավաներն են շրջապատում առաջին օկտավան.

1) փոքր և երրորդ օկտավաները
2) փոքր և երկրորդ օկտավաները
3) փոքր և մեծ օկտավաները
4) մեծ և երկրորդ օկտավաները

2. Հնչյունի տևողությունը կախված է.

1) տատանումների ուժգնությունից
2) տատանումների հաճախականությունից
3) տատանումների տևականությունից
4) տատանումների թափից

3. Ինչպե՞ս է կոչվում հնչյունի կամ ակորդի հանկարծակի ուժգնացումը (ուժեղ շեշտումը) երաժշտության մեջ.

1) դիմինուենդո
2) կրեշչենդո
3) ֆորտիսիմո
4) սֆորցանդո

4. Ի՞նչպես է կոչվում մեղեդու փոխադրումը մեկ տոնայնությունից մեկ այլ տոնայնություն.

1) զարտուղում (մոդուլյացիա)
2) տրանսպոզիցիա
3) վարիացիա
4) սեկվենցիա

5. Ո՞ր շարքում է թվարկված ինտերվալների ճիշտ հաջորդականությունը.

1) կվարտա, սեքստա, սեպտիմա
2) սեկունդա, տերցիա, կվինտա
3) տերցիա, կվարտա, կվինտա
4) կվինտա, սեպտիմա, օկտավա

6. Շարադրված թեման և նրա ձևափոխված կրկնությունները

1) սեկվենցիա
2) տրանսպոզիցիա
3) վարիացիաներ
4) զարտուղում (մոդուլյացիա)

7. Զուգահեռ տոնյանություններն ունեն

1) միևնույն տոնիկաներ, բանալու տարբեր նշաններ, տարբեր հնչյունաշարեր
2) բանալու միևնույն նշաններ, տարբեր տոնիկաներ, տարբեր հնչյունաշարեր
3) միևնույն հնչողություն, տարբեր գրություն և տարբեր նշանակություն
4) միևնույն տոնիկաներ, միևնույն հնչյունաշարեր, տարբեր կառուցվածքներ

8. Միատեսակ կամ տարբեր տևողություն ունեցող հնչյունների կազմակերպված հաջորդականությունը կոչվում է

1) տակտ
2) մետր
3) ռիթմ
4) չափ

9. Բացարձակ կատարյալ կոնսոնանսներն են.

1) պրիմա, կվինտա
2) տերցիա, սեքստա
3) պրիմա, օկտավա
4) կվարտա, կվինտա

10. Մինորում տոնիկական եռահնչյունն ունի հետևյալ կառուցվածքը.

1) փ.3 +մ.3
2) փ.3 +փքց.3
3) մ.3 +փ.3
4) փ.3 + փ.3

11. Մեղեդային մինորում ...

1) վերընթաց և վարընթաց շարժման ժամանակ 7-րդ աստիճանը բարձրանում է կես տոնով

2) վերընթաց շարժման ժամանակ 6-րդ և 7-րդ աստիճանները բարձրանում են կես տոնով, վարընթաց շարժման ժամանակ՝ իջնում

3) վերընթաց շարժման ժամանակ 7-րդ աստիճանը բարձրանում է կես տոնով, վարընթաց շարժման ժամանակ՝ իջնում

4) վերընթաց և վարընթաց շարժման ժամանակ 6-րդ աստիճանը բարձրանում է կես տոնով

12. Ինչպե՞ս գրառել հնչյունի տևողությունը, եթե այն տևում է ութերորդական + տասնվեցերորդական.

1) ութերորդականը պաուզայով
2) ութերորդականը կետով
3) քառորդ նոտա
4) ութերորդականը երկու կետով

13. Տևողությունների բաժանման առանձնահատուկ ձևերն են.

1) դուոլ, տրիոլ, կվարտոլ
2) տրիոլ, տրեմոլո, սեպտոլ
3) տրել, կվինտոլ, սեպտոլ
4) սեքստոլ, օկտետ, նովեմոլ

14. Ո՞ր ձայնաստիճանը ցույց տվող ձեռքի նշանն է ցուցադրված տվյալ նկարում.



1) դո
2) լա
3) սի
4) ռե

15. Այն չափերը, որոնք առաջանում են տարբեր պարզ չափերից, կոչվում են

1) բարդ խառը չափեր
2) բարդ չափեր
3) մեջընդմիջվող չափեր
4) փոփոխական չափեր

16. Պարբերությունը լինում է

1) մոդուլացվող կամ զարտուղող
2) պարզ և բարդ
3) երկմաս և եռամաս
4) ռեպրիզայով և առանց ռեպրիզայի

17. Քանի՞ կիսատոն է պարունակում մաքուր օկտավան.

1) ութ
2) վեց
3) երեք
4) տասներկու

18. Երաժշտական ձև, որտեղ կրկնվող թեման՝ ռեֆրենը մեջընդմիջվում է էպիզոդներով.

1) ռոնդո
2) պարզ եռամաս
3) վարիացիաներ
4) բարդ եռամաս

19. Նշել ճիշտ տողը, որտեղ բոլոր օպերաների հեղինակը Տիգրան Չուխաճյանն է.

1) «Անուշ», «Ալմաստ», «Արշակ Բ», «Զեմիրե»

2) «Զեմիրե», «Արշակ Բ», «Լեբլեբիջի», «Ալեքսինազ»

3) «Սասունցի Դավիթ», «Արշակ Բ», «Զեմիրե», «Նունե»

4) «Ալեքսինազ», «Խորտակում», «Արշակ Բ», «Դավիթ-Բեկ»

20. Նշվածներից ո՞րն է հայկական առաջին ազգային օպերան.

1) «Արշակ Բ»

2) «Դավիթ-Բեկ»

3) «Անուշ»

4) «Սասունցի Դավիթ»

21. Ո՞րն է հայկական առաջին բալետը.

1) Արամ Խաչատրյան՝ «Գայանե»

2) Արամ Խաչատրյան՝ «Սպարտակ»

3) Գրիգոր Եղիազարյան՝ «Սևան»

4) Արամ Խաչատրյան՝ «Երջանկություն»

22.Նշել ճիշտ տողը, որտեղ բոլոր ստեղծագործությունների հեղինակը Տիգրան Մանսուրյանն է.

1) «Խուտուտ-մուտուտ», «Գարնան կանչով», «Անլռելի զանգակատուն» օրատորիա, «Ռեքվիեմ»

2) «Ռեքվիեմ», «Խուտուտ-մուտուտ», «Չորս հայրեն Նահապետ Քուչակի խոսքերով», «Զյունե թագուհին» բալետ

3) «Գարնան կանչով», «Աշխատանքի երգ», «Դուն էն հուրին ես», «Զանգն առաջին»

4) «Խուտուտ-մուտուտ», «Արջամուկը», «Նապաստակի երգը», «Նոր տարվա երգ-պար»

23. Հայկական ժողովրդական երգարվեստում ի՞նչն է կոչվում ձայն-ձայնակարգ.

1) երգերն ու մեղեդիները կապված են կայուն թեմատիկ դարձվածքների հետ, որոնք բխում են երգի ժանրային առանձնահատկություններից

2) երգերն ու մեղեդիները կապված չեն կայուն թեմատիկ դարձվածքների հետ և չեն բխում երգի ժանրային առանձնահատկություններից

3) ձայն-ձայնակարգն ունի թեմատիկ դարձվածքների ազատ, կամայական դրսևորում

4) երգի ժանրային առանձնահատկությունները չեն նպաստում ձայն-ձայնակարգի ձևավորմանը

24. Ո՞րն է «Հինգ էծ ունեմ ուլերով» հայկական ժողովրդական երգի ձայնակարգը.



1) էոլական

2) դորիական

3) փռյուգիական

4) միքսոլիդիական

25. Որոշել «Մանրիկ տերևիկ ծաղիկ» ժողովրդական երգի ժանրը.



1) աշխատանքային

2) պատմական

3) կատակերգ

4) պարերգ

26. Նշել ճիշտ տողը, որտեղ բոլոր մանրանվագները Կամիլ Սեն-Սանսի «Կենդանիների պարահանդես» ստեղծագործությունից են.

1) «Փիղը», «Մահացող կարապը», «Փայտե ձիուկ», «Արևիկ»

2) «Ակվարիում», «Փիղը», «Առյուծի քայլերգը», «Իշուկ»

3) «Առյուծի քայլերգը», «Ծիտիկի օրորը», «Իմ ձին», «Գարնան կարոտ»

4) «Օրորոցային», «Առավոտ», «Մարալի», «Շուշիկի»

27. Լիդիական մաժորը ո՞ր ձայնաստիճանով է տարբերվում բնական մաժորից.

1) բարձր չորրորդ

2) բարձր վեցերորդ

3) ցած յոթերորդ

4) ցած երկրորդ

28. Նշված խմբերգերից ո՞րն է հեղինակել Կոմիտաս վարդապետը.

1) «Գարուն ա»

2) «Թագվորի մեր, դուս արի»

3) «Գարուն»

4) «Լոռու գութաներգ»

29. Նշված ձայնակարգերից (լադերից) ո՞րը մաժոր չէ.

1) փռյուգիական

2) իոնական

3) միքսոլիդիական

4) լիդիական

30. Նշված բալետներից ո՞րն է ստեղծել կոմպոզիտոր Էդգար Հովհաննիսյանը.

1) «Կարապի լիճը»

2) «Զյունե թագուհին»

3) «Չիպոլինո»

4) «Հավերժական կուռք»

31. Նշված երգերից ո՞րը Սայաթ-Նովայի երգը չէ.

1) «Բլբուլի հիդ լաց իս էլի»

2) «Այգեպան»

3) «Դուն էն գլխեն իմաստուն իս»

4) «Աշխարհումս ախ չիմ քաշի»

32. Նշված երգերից ո՞րը Ջիվանու երգը չէ.

1) «Ձախորդ օրերը»

2) «Ես մեկ ծառ եմ ծիրանի»

3) «Ամեն սազի մեջըն գոված»

4) «Ընկերը»

33. Նշված երգերից ո՞րը ժողովրդական երգ չէ.

1) «Ալագյազ»

2) «Խնկի ծառ»

3) «Կաքավի երգը»

4) «Սոնա յար»

34. Ո՞ր տողի բոլոր երգերի հեղինակն է կոմպոզիտոր Ռոբերտ Պետրոսյանը.

1) «Իմ ուսուցիչ», «Աշուն», «Ջա՜ն հայրենիք», «Անձրևի երգը»

2) «Խուտուտ-մուտուտ», «Երգ մայրիկիս», «Նոր տարվա երգ-պար», «Նապաստակի երգը»

3) «Ձյուն է, ձյուն», «Զանգն առաջին», «Հայաստան», «Հովիվ»

4) «Մենք թոռներն ենք Մաշտոցի», «Խաչքար», «Իմ ուսուցիչ», «Արարատի ծեր կատարին»

35. Նշված երաժշտաթատերական երկերից ո՞րը օպերա չէ.

1) «Զեմիրե»

2) «Ալմաստ»

3) «Անտունի»

4) «Լուսաբացին»

36. Նշված երաժշտաթատերական երկերից ո՞րը բալետ չէ.

1) «Անուրջների լիճը»

2) «Դավիթ-Բեկ»

3) «Անտունի»

4) «Հավերժական կուռք»

37. Նշված եզրույթներից ո՞րը ուժգնության (դինամիկայի) նշան չէ.

1) ֆորտե

2) պիանիսիմո

3) բեկար

4) պիանո

38. Նշված եզրույթներից ո՞րը ալտերացիայի նշան չէ.

1) դիեզ

2) բեկար

3) պիանո

4) բեմոլ

39. Նշված երաժշտաթատերական երկերից ո՞րն է բալետը.

1) «Երջանկություն»

2) «Դավիթ Բեկ»

3) «Խաչատուր Աբովյան»

4) «Խորտակում»

40. Նշված երաժշտաթատերական երկերից ո՞րն է ստեղծված Հովհաննես Թումանյանի ստեղծագործության հիման վրա.

1) Արամ Խաչատրյան՝ «Երջանկություն»

2) Գևորգ Արմենյան՝ «Մարո»

3) Տիգրան Չուխաճյան՝ «Լեբլեբիջի Հոր-հոր աղա»

4) Հարո Ստեփանյան՝ «Քաջ Նազար»

41. Նշել Ա.Բաբաջանյանի երգը Ա.Վոզնեսենսկու բանաստեղծության հիման վրա.

1) «Королева красоты»
2) «Лучший город Земли»
3) «Верни мне музыку»
4) «Свадьба»

42. Լայպցիգի ո՞ր եկեղեցում է ծառայել Յ.Ս.Բախը.

1) Դոմինիկյան Սբ. Պողոս
2) Օգոստինյան Սբ.Թովմաս
3) Ֆրանցիսկյան Սբ. Spirit
4) Բենեդիկտյան Սբ. Որջ

43. Նշել ռուս կոմպոզիտորին, ով մշակել է «Կռունկ», «Ծիծեռնակ», «Զեյթունցիների քայլերգ» հայկական երգերը.

1) Դ.Շոստակովիչ
2) Մ.Իպոլիտով-Իվանով
3) Գ.Սվիրիդով
4) Ս.Պրոկոֆև

44. Նշել «Մարդուկ-Զարդուկ» («Շչելկունչիկ») բալետի գործող անձանց.

1) Դրոսելմեյեր, Շտալբաում, Ֆրից
2) Օդետա, Ռոտբարտ, Զիգֆրիդ
3) Արքայազն, Խորթ մայր, Կրիվլյակա
4) Դեզիրե, Ավրորա, Ֆլորեստան

45. Նշել օպերային դահլիճը, որտեղ առաջին անգամ է բեմադրվել «Ռիգոլետտո» օպերան.

1) Միլանի «La Scala» օպերային թատրոն
2) Ֆլորենցիայի օպերային թատրոն
3) Վենետիկի «Ֆենիչե» օպերային թատրոն
4) Հռոմի օպերային թատրոն

46. Ո՞ր դարում է ձևավորվել Իմպրեսիոնիզմ ուղղությունը.

1) XVII-XVIII դ.
2) XIX-XX դ.
3) XVIII-XIX դ.
4) XX-XXI դ.

47. Նշել նվագարանը, որով նվագում էր Ֆավնը՝ «Ֆավնի հետկեսօրյա հանգիստը» սյուիտի կերպարը.

1) Ֆլեյտա
2) Տավիղ
3) Պանի ֆլեյտա
4) Քնար

48. Ո՞վ է բալետի ինքնուրույն տեսակի հիմնադիրը.

1) Լեո Դելիբ
2) Ժան-ժորժ Նովեր
3) Պյոտր Չայկովսկի
4) Կամիլ Սեն-Սանս

49. Ո՞ւմ ջանքերով է 1843 թ. հիմնադրվել Լայպցիգի կոնսերվատորիան.

1) Յ.Ս.Բախի
2) Լ. վան Բեթհովենի
3) Ֆ.Մենդելսոնի
4) Ռ.Շումանի

50. Որոշել ստեղծագործությունը և հեղինակին.



1) Վ. Մոցարտ	«Փոքրիկ գիշերային սերենադ»
2) Գ. Սվիրիդով	«Տրոյկա»
3) Պ. Չայկովսկի	«Սերենադ»
4) Ջ. Վերդի	«La donna e`mobile»

51. Որոշել ստեղծագործությունը և հեղինակին.



1) Ֆ. Շոպեն Պրելյուդ
2) Կ.Սեն-Սանս «Փիղը»
3) Ջ.Ռոսինի Նախերգանք «Վիլհելմ Տելլ» օպերայից
4) Մ.Գլինկա «Կամարինյան»

52. Որոշել ստեղծագործությունը և հեղինակին.



1) Յ.Շտրաուս-հայր «Վալս»
2) Դ.Շոստակովիչ «Կատակ-վալս»
3) Պ.Չայկովսկի «Վալս»
4) Յ.Շտրաուս-որդի «Վալս»

53. Որոշել ստեղծագործությունը և հեղինակին.



1) Ժ. Բիզե «Տղաների քայլերգը» «Կարմեն» օպերայից
2) Կ. Սեն-Սանս «Առյուծի քայլերգը» «Կենդանիների պարահանդես» սյուիտից
3) Յ. Շտրաուս-հայր «Ռադեցկու քայլերգ»
4) Պ. Չայկովսկի «Անագե զինվորիկների քայլերգը» «Շչելկունչիկ» բալետից

54. Որոշել ստեղծագործությունը և հեղինակին.



1) Ա. Լյադով	«Երաժշտական զարդատուփ»
2) Լ.Դելիբ	«Պիցցիկատո»
3) Ֆ.Մենդելսոն	«Գիշերվա ամառային երազը»
4) Կ.Սեն-Սանս	«Ակվարիում»

55. Ո՞ր երկուսը Ազատ Մանուկյանի «Չարի վերջը» օպերայի հերոսներ չեն.

1) գայլ

2) աղվես

3) շուն

4) ագռավ

5) արջ

56. Նշել երկու տարբերակները, որտեղ կառուցված են միայն փոքր սեքստա ինտերվալներ դեպի վեր.

1) սի բեմոլ - սոլ բեմոլ, սոլ բեմոլ - մի բեմոլ, ռե - սի բեմոլ
2) սի – սոլ բեմոլ, ռե – սի բեմոլ, դո դիեզ – լա
3) սոլ – մի բեմոլ, դո – լա բեմոլ, ֆա դիեզ - ռե
4) ֆա – ռե բեմոլ, սոլ դիեզ – մի, ռե դիեզ - սի
5) սի բեմոլ - սոլ, դո դիեզ - լա, ֆա - ռե բեմոլ

57. Նշել երկու տարբերակները, որտեղ թվարկված են միայն դանդաղ տեմպերը.

1) Adagio, Grave, Larghetto
2) Andante, Sostenuto, Largo
3) Largo, Adagietto, Lento
4) Grave, Andantino, Largo
5) Adagio, Andante, Moderato

58. Ո՞ր երկու շարքերում են ներկայացված միայն հայկական ժողովրդական երաժշտության ձայնակարգերը.

1) իոնական, պենտատոնիկա, էոլական
2) լիդիական, միքսոլիդիական, ամբողջատոն
3) լիդիական, էոլական, լոկրիական
4) էոլական, անհեմիտոն, կրկնակի մեծացրած
5) դորիական, փռյուգիական, միքսոլիդիական

59. Ընտրել տրված լուծված երաժշտամաթեմատիկական օրինակներից երկու ճիշտ տարբերակները.

1) մաք.5 + մաք.1 = փ.6
2) մ.3 +մ.3 = մծց.5
3) մ.2 + մծց.5 = մ.7
4) փքց.5 + մծց.4 = մ.7
5) փ.3 + մաք.4 = փ.6

60. Ընտրել տրված լուծված երաժշտամաթեմատիկական օրինակներից երկու սխալ տարբերակները.

1) մծg.4 – մծg.2 = մ.3
2) մ.7 – փ.3 = փ.6
3) մաք.8 – մծg.4 = փքg.5
4) մծg.5 – մծg.4 = մ.2
5) փքg.7 - մծg.4 = մ.3

61. Նշել Լ.վան Բեթհովենի երկու ստեղծագործությունները.

1) «Գիշերային փոքրիկ սերենադ»
2) «Պրոմեթևսի արարչությունը» բալետ
3) Ռեքվիեմ
4) «Երաժշտական ակնթարթ» մանրանվագ
5) «Էլիզեին»

62. Նշել երկու համակարգչային ծրագրեր, երաժշտական տեքստը նոտագրելու համար.

1) Sibelius
2) DaVinci Resolve
3) Final
4) Sound Forge
5) Power Point

63. Նշել երաժշտության համար նախատեսված երկու կայքեր և հարթակներ.

1) Loneti
2) Astropad Studio
3) Spotify
4) Soundcloud
5) Lightroom

64. Համապատասխանեցնել երաժշտական տերմիններն իրենց սահմանումներին.

Ա) ակորդ
Բ) ֆուգա
Գ) մոտիվ
Դ) զարտուղում

1) պոլիֆոնիկ երաժշտության ամենաբարդ, կատարյալ ձև,
2) մեղեդու փոխադրումը լադի աստիճաններով վեր կամ վար,
3) պարբերության բաղկացուցիչ մաս,
4) մեկ շեշտի շուրջ համախմբված ռիթմական միավոր,
5) անցում մեկ տոնայնությունից մեկ այլ տոնայնություն կադանսային ամրապնդմամբ,
6) երեք և ավելի հնչյունների համահնչյունը:

Ա	Բ	Գ	Դ

65. Համապատասխանեցնել օպերայի անվանումը գրական սկզբնաղբյուրին.

Ա) Ալեքսանդր Սպենդիարյան՝ «Ալմաստ»
Բ) Արմեն Տիգրանյան՝ «Դավիթ-Բեկ»
Գ) Ստեփան Զրբաշյան՝«Գիքորը»
Դ) Միքայել Միրզայան՝ «Ճպուռն ու մրջյունը»

1) Հովհաննես Թումանյան՝ «Մի կաթիլ մեղր»
2) Հովհաննես Թումանյան՝ «Գիքորը»
3) Հովհաննես Թումանյան՝ «Թմկաբերդի առումը»
4) Ղազարոս Աղայան՝ «Արեգնազան»
5) Ռաֆֆի՝ «Դավիթ-Բեկ»
6) Աթաբեկ Խնկոյան՝ «Ճպուռն ու մրջյունը»

Ա	Բ	Գ	Դ

66. Համապատասխանեցնել երաժշտական ստեղծագործությունները հեղինակած կոմպոզիտորներին.

Ա) «Սիլվիա» բալետ
Բ) «Ռադեցկու քայլերգ»
Գ) «Կենդանիների պարահանդես»
Դ) «Ամառային գիշերվա երազը»

1)Պ. Չայկովսկի
2) Յ.Շտրաուս-հայր
3) Ֆ.Մենդելսոն
4) Կ.Սեն-Սանս
5) Լ.Դելիբ
6) Ռ.Շուման

Ա	Բ	Գ	Դ

67. Համապատասխանեցնել գրական ստեղծագործությունները հեղինակներին.

Ա) «Ջոն Ուրախության»
Բ) «Ֆավնի հետկեսօրյա հանգիստը»
Գ) «Քնած գեղեցկուհի»
Դ) «Գիշերվա ամառային երազ»

1) Ս.Մալարմե
2) Ու. Շեքսպիր
3) Վ.Մուլլեր
4) Շ.Պերո
5) Ֆ.Շիլեր
6) Լ.Ռելշտաբ

Ա	Բ	Գ	Դ

68. Համապատասխանեցնել կոմպոզիտորները ուղղություններին.

Ա) Ա.Վիվալդի
Բ) Կ.Դեբյուսի
Գ) Ռ. Շուման
Դ) Յ. Հայդն

1) Սիմվոլիզմ
2) Ռոմանտիզմ
3) Բարոկո
4) Իմպրեսիոնիզմ
5) Կլասիցիզմ
6) Ռեալիզմ

Ա	Բ	Գ	Դ

69. Համապատասխանեցնել ծննդյան և մահվան տարեթվերը կոմպոզիտորներին.

Ա) Լ.վան Բեթհովեն
Բ) Ֆ. Շուբերտ
Գ) Յ.Ս. Բախ
Դ) Ջ. Ռոսինի

1) 1797 - 1828
2) 1792 - 1868
3) 1685 - 1750
4) 1770 - 1827
5) 1835 - 1921
6) 1756 – 1791

Ա	Բ	Գ	Դ

70. Համապատասխանեցնել երաժշտական ստեղծագործությունները հեղինակած կոմպոզիտորներին.

Ա) «Կենդանիների պարահանդես»
Բ) «Ֆավնի հետկեսօրյա հանգիստը»
Գ) «Երաժշտական զարդատուփ»
Դ) «Խաղալիքների սիմֆոնիա»

1) Լ. Դելիբ
2) Յ. Հայդն
3) Կ.Դեբյուսի
4) Ա. Լյադով
5) Ն.Ռիմսկի-Կորսակով
6) Կ. Սեն-Սանս

Ա	Բ	Գ	Դ

71. Համապատասխանեցնել «Տարվա եղանակներ»-ը կոմպոզիտորներին.

Ա) «Տարվա եղանակներ» a capella երգչախմբի համար
Բ) «Տարվա եղանակներ» մանրանվագների շարք դաշնամուրի համար
Գ) «Տարվա եղանակներ» կոնցերտը
Դ) «Տարվա եղանակներ» օրատորիա

1)Յ. Հայդն
2) Գ.Չթչյան
3) Պ.Չայկովսկի
4) Ռ.Շուման
5) Ա.Վիվալդի
6) Վ.Մոցարտ

Ա	Բ	Գ	Դ

72. Համապատասխանեցնել օպերաները հեղինակներին.

Ա) «Դոն Ժուան»
Բ) «Ռիգոլետտո»
Գ) «Վիլհելմ Տելլ»
Դ) «Ֆիդելիո»

1) Ջ.Ռոսինի
2) Ժ.Բիզե
3) Ջ.Վերդի
4) Վ.Մոցարտ
5) Լ.Բեթհովեն
6) Մ.Գլինկա

Ա	Բ	Գ	Դ